# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «04» մարտի 2019թ.

2019թ-ի փետրվարի 18-ից մարտի 04-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ա. Գևորգյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Տեխնիկական տնօրեն. |
| Ս. Չիդեմյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ. |
| Ա. Ստեփանյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի ՀՇԳՑ N1 էն. բլոկի նորոգումների գծով պետի տեղակալ. |
| Լ. Օհանյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ. |
| Ա. Պետրոսյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի մատակարարման և գնումների բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով . |
| Ա. Վարդապետյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ. |

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-

րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արկադի Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | ֆիլտրի ներդիր | 1 500 000 |
| 2. | ֆիլտր | 165 200 |
| 3. | Օդի ֆիլտր G4 տիպի | 498 880 |
| 4. | Օդի ֆիլտր G4 տիպի | 469 520 |
| 5. | Օդի ֆիլտր | 160 000 |
| 6. | ֆիլտր | 4 000 000 |

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի փետրվարի 18-ին, ժամը «17:30»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Էլ" փոստ |
|---|---|---|---|
| 1 | «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ | Ք. Երևան, Սարյան փ. 24/32 | llckako@gmail.com |
| 2 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան Գ. Լուսավորիչ 7/1 | Reforcegroupllc@gmail.com |
| 3 | «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ | ՀՀ, 0051, ք. Երևան, Աբովյան 66, բն. 10 | proinvestone@gmail.com |
| 4 | «Ալեքս-Պրո» ՍՊԸ | ՀՀ Ք. Երևան, Ռոստովյան 36/33 | Alexprollc1@gmail.com |
| 5 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ., 13/30 | Khv_84@mail.ru<br>eychgroup@gmail.com |
| 6 | «Ա/Ձ ՄԵՍՐՈՊ ԱՂԱՋԱՐՅԱՆ ՎԻԳԵՆԻ» | - | Hvac.service.armenia@gmail.com |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

բացառությամբ՝ «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում ներառված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում Հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես 1-ին չափաբաժնում նշված է ոչ թե հրավերով պահանջվող ներդիրի տեսակը, այլ քարթրիջի տեսակը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

| Հ/հ | Չափաբաժնի անվանումը | Նախահաշվային գումարը | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի նշում X | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |
| 1 | ֆիլտրի ներդիր | 1 500 000 | 1 | X | «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ | 207 000 | 248 400 |
| | | | 2 | | «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ | 1399000 | 1399000 |
| | | | 3 | | «Ալեքս-Պրո» ՍՊԸ | 1480000 | 1480000 |
| | | | | | | | |
| 3 | Օդի ֆիլտր G4 տիպի | 498 880 | 1 | X | «Ա/Ձ ՄԵՍՐՈՊ ԱՂԱԶԱՐՅԱՆ ՎԻԳԵՆԻ» | 320 000 | 320 000 |
| | | | 2 | | «Ալեքս-Պրո» ՍՊԸ | 330 000 | 330 000 |
| | | | 3 | | «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ | 356 500 | 427 800 |
| | | | 4 | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 384 000 | 460 800 |
| | | | | | | | |
| 4 | Օդի ֆիլտր G4 տիպի | 469 520 | 1 | X | «Ա/Ձ ՄԵՍՐՈՊ ԱՂԱԶԱՐՅԱՆ ՎԻԳԵՆԻ» | 304 000 | 304 000 |
| | | | 2 | | «Ալեքս-Պրո» ՍՊԸ | 330 000 | 330 000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 3 | | «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ | 339 250 | 407 100 |
| | | | 4 | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | 384 000 | 460 800 |
| | | | | | | | |
| 5 | Օդի ֆիլտր | 160 000 | 1 | X | «Ա/Ձ ՄԵՍՐՈՊ ԱՂԱԶԱՐՅԱՆ ՎԻԳԵՆԻ» | 120 000 | 120 000 |
| | | | | | | | |
| 6 | ֆիլտր | 4 000 000 | 1 | X | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 3 200 000 | 3 840 000 |
| | | | 2 | | «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ | 3 266 000 | 3 919 200 |
| | | | | | | | |

Որոշվեց՝

1. Ա. Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊ, «Ա/Ձ ՄԵՍՐՈՊ ԱՂԱԶԱՐՅԱՆ ՎԻԳԵՆԻ» «Էյչ Գրուպ» ՍՊ, «ՊՌՈ Ինվեստ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:
3. Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:
5. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Որոշվեց՝

1. «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

## 2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան _____

Ա. Ստեփանյան _____

Լ. Օհանյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա. Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____